Կուտակային համակարգը չի ուշանա

-Նախատեսվում էր, որ այս տարվա ապրիլին պետք է ստեղծվեին կենսաթոշակների կուտակային ֆոնդերը: Գործընթացը կարծես դանդաղում է, ինչո՞վ է պայմանավորված:

-Կենսաթոշակային բարեփոխումներն ապահովող օրենքներն ընդունվեցին դեկտեմբերի 22-ին, իսկ այս տարվա հունվար-փետրվարին արդեն ընդունվեց օրենքների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերի ցանկը: Ըստ այդ ցանկի մեջ ներառված մի շարք ենթաօրենսդրական, իրավական ակտերի՝ նախագծեր մշակվեցին, և մի մասը արդեն հաստատվել է կառավարության կողմից: Մասնավորապես՝ մայիսի 5-ի կառավարության նիստում ընդունվեց 9 որոշում, որոնցով շուրջ 20 կարգ հաստատվեց: Հաստատված որոշումները նաև վերաբերում են այսօրվա կենսաթոշակային համակարգին և առկա խնդիրների վերացմանը: Բացի այս ամենից՝ կուտակային համակարգի գործունեությունն ապահովելու համար կառավարությունը և ԿԲ-ն պետք է հաստատեն մի շարք ենթաօրենսդրական ակտեր: ԿԲ-ի խորհուրդն արդեն մի շարք որոշումներ է ընդունել, որոնք առնչվում են կամավոր կուտակային համակարգին: Այնպես որ, համաձայն չեմ, որ կամավոր կուտակային համակարգի ներդրումն ուշանում է, քանի որ ինչպես ասացի, օրենքներն ընդունվեցին դեկտեմբերի 22-ին, իսկ ներկայում բավական սեղմ ժամկետներում ընդունվում են ենթաօրենսդրական ակտերը: Կարծում եմ, որ հուլիսից կուտակային ֆոնդերն արդեն կսկսեն գրանցվել, գործել, ներկայացնել իրենց պրոդուկտները:

-Կամավոր և հետագայում նաև պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրումը ենթադրում է երկար փողեր, մենք որտե՞ղ ենք այդ գումարները ներդնելու՝ հաշվի առնելով կապիտալի շուկայի թերզարգացվածությունը:

-Կառավարության կողմից շրջանառության մեջ է դրվել նոր նախագիծ, որը շուտով կներկայացվի կառավարության հաստատմանը: Ֆինանսների նախարարության կողմից մշակված նախագծով սահմանվելու են այդ ներդրումների սահմանափակումները, այսինքն՝ որտեղ կարող են այդ գումարները ներդրվել: Իհարկե, օրենքով այդ ամբողջը հիմնականում

կարգավորված է, բայց ռիսկերի դիվերսիֆիկացիան, չափաքանակների սահմանափակման լիազորությունը տրված է կառավարությանը: Դա արվել է, որ ավելի ճկուն լինի՝ հաշվի առնելով, որ կապիտալի շուկան ավելի դինամիկ է, և որպեսզի անընդհատ օրենքներում փոփոխություններ չարվեն: Երբ 2014-ից ներդրվի պարտադիր կուտակային համակարգը, նախատեսվում է, որ այդ համակարգի գումարները կլինեն Դ18-20 մլրդ-ի շրջանակներում, կարծում ենք, որ Հայաստանի տնտեսությունն այդ գումարները կլանելու հնարավորություն ունի և կունենա: Ժամանակի ընթացքում ինչպիսի զարգացումներ տեղի կունենան՝ դա արդեն կյանքը ցույց կտա:

-Կամավոր կուտակային համակարգի՝ երեք տարի գործելուց հետո անցում է կատարվելու պարտադիրի, եթե հաշվի առնենք, որ պարտադիրի արդյունքները տեսանելի կլինեն 25 տարի հետո: Արդյոք այս երեք տարին քիչ չէ՞ հնարավոր խնդիրների և ռիսկերի բացահայտման համար:

-Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրումը որպես առաջին քայլ անհրաժեշտ է, որ մենք կարողանանք փորձարկել, վերհանել ընթացակարգային հիմնախնդիրները, որոնք կարող են առաջանալ կուտակային համակարգի շրջանակներում, և նաև այդ արդյունքներով վերջնական սահմանումներ տանք պարտադիր կուտակային համակարգին: Ակնկալվող արդյունքները, որոնք որ այսօր մոդելավորված են և մոդելի հիման վրա են ձևավորված, այն քայլերն են, որոնք արվում են կանխատեսումների հիման վրա, բայց կա նաև իրական կյանք: Ընդհանրապես փորձը ցույց է տալիս, որ այդ մոդելավորումն արդեն բավականին պարզեցնում է, թե ինչպիսի ընթացակարգերով ենք գնալու, ինչ արդյունքներ ենք ունենալու: Մեզանում կա պարտադիր պահանջ. յուրաքանչյուր տարի, փաստացի ցուցանիշներից ելնելով, կատարել ճշգրտումներ: Կուտակային կենսաթոշակային համակարգով մենք ապահովելու ենք բարձր կենսամակարդակ մեր կենսաթոշակառուների համար: Մեր ներդրվող համակարգի տարբերությունն այն է, որ պահպանվելու է միշտ պետական կենսաթոշակային ապահովության համակարգը, որն ըստ էության պետության կողմից սոցիալական երաշխիքն է կենսաթոշակի անցնող ցանկացած անձի, դրա վրա ավելացվելու են կուտակային բաղադրիչները նոր և պարտադիր տեսքով:

-Եթե ամեն ինչ այդքան փայլուն է, ինչո՞ւ այդքան շատ ընդդիմախոսներ ունեք:

-Հանրապետությունում կենսաթոշակային բարեփոխումներն իրականացվում են արդեն տասը տարի: Ընդհանրապես, աշխարհում այդ բարեփոխումները համարվում են բարդագույն բարեփոխումներից մեկը: Դա պայմանավորված է նրանով, որ տվյալ երկրի սոցիալ-տնտեսական բոլոր

բնագավառներն առնչվում են իրար: Այս տասը տարվա ընթացքում այս բոլոր բարեփոխումները եղել են, և դրա շրջանակներում եկել ենք այս որոշումներին: Այնպես չէ, որ որոշումն ընդունել ենք մեկ օրում, ինչպես արվել է մի շարք երկրներում, երբ ներդրվել է, հետագայում փորձել են լուծել առաջացող խնդիրները: Այս տասը տարվա ընթացքում նաև ընդդիմախոսներն են մասնակցել քննարկումներին, և եկել ենք հետևյալ եզրակացության՝ ներդրել այս համակարգը: Ընդդիմախոսներ չեն կարող չլինել, բայց եթե առարկայական դաշտում ենք խոսում, ապա իրենց տեսակետների լուրջ հիմնավորումներ չեն բերում: Ասվում է, որ լավ չի լինի, բայց ինչը լավ չի լինի՝ չեն ասում: Դե, եթե մենք բոլորս հասկանում ենք, որ միշտ կարող է խնդիր լինել, ապա եկեք ոչ մի բան չանենք, և որևէ մեկը չի ընդդիմախոսի, չի ասի, որ կարող է վատ լինել, ու մենք կմնանք այս վիճակի մեջ, ինչ որ կա: Սա էլ է տարբերակ, բայց կարծում եմ՝ ընդունելի չէ:

Արմենակ Չատինյան, «Կապիտալ», 18.05.2011 թ.